


կոչումը:

Ես ուզում եմ կարծել, որ մենք, ռուս ժակարոյծներս, որ սնուել եւ մտաւոր աշխատանքի համար ազատ ժամանակ ենք ձեռք բերել ժաղովրդի ջանքերի շնորհիւ, կըմբռնենք մեր մեղքը և մեր անձնական շահերից անկախ, յանուն արդարութեան և ճշմարտութեան, որը դատապարտում է մեզ, կաշխատենք լուծել այն և ազատուիլ նրանից:

Ե. Ճ. Վ. Մ.



## ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Զ.

Մինչեւ Ե. դարի Բ. Իշոր եպիսկոպոսները ամուսնացած էին: Յեղափոխութիւն աշխարհիկ նոգեւորականութեան կեանքում: Ամուրի եպիսկոպոսների վանքերում հաստատուելու պատճառները: Վաղարշապատի կարուդիկէն և Սուրենայ անապատը: Հայ կրօնաւորութիւնը ըստ Ղազարի: Կրօնաւորութեան անկումն բարոյապէս: Լաւ կրօնաւորութիւն ի դէմս Թաթլոյ եւ նրա խրատը:—

Մինչեւ Ե. դարի համարեա կէսը, ինչպէս ընդհանուր, նոյնպէս և Հայոց եկեղեցում եպիսկոպոսները ամուսնացած էին և կազմում էին աշխարհիկ հոգեւորականութեան մասը՝ վարելով հոգեւոր տեսչական պաշտօնները: Իբրև բացառութիւն կային ամուրի եպիսկոպոսներ էլ, ինչպէս մեր և Արիստակէսն ու ո. Գրիգորիսը—ո. Լուսաւորչի որդին և թոռն, Պաֆնուտիոսը Եղիպտոսի Աղէքսանդրիայում և Եւստաթէոսը՝ Փոքր-Հայոց Սեբաստիայում: Հայոց վերջին ամուսնացած հայրապետը ո. Սահակ Պարթեն էր, որ վախճանուեց Ե. դարի քառամսական թուերին և գուցէ

Յովսէփի Վայոցձորեցին, որովհետեւ նրա համար մեր պատմիչները ասում են, որ «ի քահանայից էր»։ Ե. դարում ամուրիութիւնը բարձր հսկեորականութեան մէջ արդէն այնքան սովորական էր դարձել, որ նոր ամուսնացածները եպերանքի էին ենթարկւում, ինչպէս ո. Սահակի հակաթոռ Շմուէլը, Բրբիշոն և Սուրմակը, որոնց մեղադրում էին ի միջի այլոց ասելով, որ նրանք հայրապետանոցը լցրել էին կանանցով ու երեխաներով և նրանց ազդեցութեան տակ էին գործում։

Քանի որ եպիսկոպոսները ամուսնացած էին, իբրև աշխարհիկ հսկեորականներ, ապրում էին քաղաքներում, բայց երբ ամուրիութիւնը պարտաւորական կանոն գործաւ և եպիսկոպոսները, նրացնելով կրօնաւորների կոչտոքեմը, հագան այդ սքեմը և շրջապատուեցին կրօնաւորներով, ինքն ըստ ինքեան առաջ եկաւ նրանց քաղաքներում բնակուելու անյարմարութիւնը։ Հեռաւոր անապատներում չէր կարելի առանձնանալ, որովհետեւ իբրև եպիսկոպոս հսկեոր տեսուչ ժողովրդի հետ անընդհատ յարաբերութեան մէջ էին, Ուստի և քաղաքներից ոչ շատ հեռու վանքեր հաստատուեցին, ուր և բնակուեցին եպիսկոպոսները։ Այս եպիսկոպոսանիստ վանքերը հնումն կոչւում էին մայրաքաղաք վանք, մայրավանք, լավրա, Այս սովորութիւնը Ե. դարում համարեա կանոն գարձաւ և մինչեւ Ժ. դարը հայ եկեղեցում գործադրում էր որպէս օրէնք։

Մենք դիտենք, որ կաթողիկոս ընտրող չորս Արքեպիսկոպոսների աթոռները հաստատուած էին Այրարատեանը՝ Բցնու, Սիւնեացը՝ Տաթևի, Գուգարացը՝ Հաղբատու և Շաւարշանինը՝ ո. Թաղէոս առաքելոյ վանքերում։ Գաւառական եպիսկոպոսական աթոռներն էին Արքագածոտինը՝ Ամրերդի, Շիրականը՝ Հոռոմոսի, Գառնունը՝ Հաւուց թառի վանքերում։ Մեր նապատակից դուրս է բոլոր եպիսկոպոսական վիճակները և աթոռանիստ վանքերը թուել որոնք բոլորն էլ քաղաքներից դուրս են, բայց հեռու չեն։

ԺԹ. դարի սկզբին նորից եպիսկոպոսական աթոռաները տեղափոխուեցին քաղաքները, դրա պատճառը ժողովրդի կարիքին անմիջապէս հասնելու պահանջն էր և ժամանակի ձախորդ հանգաւանքների բերմամբ՝ վանքերի անշքանալն, աղքատանալն ու աւերակ դառնալը:

Միշտ տարակուսի տռարկայ է եղել, թէ ներսէս Գ. Շինողը ժողնելով Վաղարշապատի կաթուղիկէն, ու ս. կոյսերի վկայականները է. դարում, ինչու է շինում Վաղարշապատից միայն 4 վերստ հեռաւորութեամբ առապարում Զուարթնոց կոչուած եկեղեցին: Այս տարակոյսը ես լուծուած եմ համարում վերև յիշուած հանգամանքով և հետեւեալ բացատրութեամբ:

Վարդանանց պատերազմից յետոյ երբ Վաղարշապատն ու կաթուղիկէն աւերակ էին դարձել, Վահան Մամիկոնեանը մօր կողմից լինելով ս. Սահակ պարթեի թոռն, իւր մօրենական պապերի դաստակերտի վերայ խնամք տանելով՝ կաթուղիկէն վերաշինեց իւր սննդակից Դաղար փարպեցուն վերաշինութեան հոգաբարձ կարգելով. կաթուղիկէին մօտ կրօնաւորների մենաստան էլ շինեց, բնակեցրեց այնտեղ կրօնաւորներ ու նրանց վերայ վանահայր կարգեց նոյն Ղազարին:

Ասողկից<sup>1)</sup> առնելով՝ ոմանք կարծում են, որ Վաղարշապատի կաթուղիկէն մենաստանի վերածուած ժամանակ Սուրենայ անապատ էր կոչւում: Ասողիկը ասում է. «ի ժամանակս իշխանութեան իւրոյ (Վահան Մամիկոնեան) զմեծ կաթուղիկէ եկեղեցին, որ ի Հայո, վերստին մեծապէս նորոգեաց զգասս կրօնաւորաց բազմացուցանելով, —որ Սուրենայ անապատ ասի. վերակացու նոցակարգեալ զՂազար Փարպեցի ճարտասան և պատմագիր»: Զաքարիա սարկաւագը կարծում է, որ Յովհաննայ վանքն է Սուրենայ անապատը: Բատ Զաքարիայի՝ կարբու մօտ Յովհաննայ վանքը սկզբում կոչւում էր Միւղի կամ Սովի վանք, Միւղին կամ Սովին, փոփոխութեան ենթարկուելով

1) Ստեփ. Տարոնեցոյ պատմ: Ա. Պ. բուրգ 1885 եր. 82:

հնչման կողմից կոչուեց Սուրենայ վանք, անապատ Ուրեմն, ըստ Զաքարիայի, Ղազարը կաթուղիկէի վերաշխ նուժեան հոգաբարձ լինելով՝ էր միանգամայն Սուրենայ անապատ կոչւող Յովհաննայ վանքի վանահայր։ Այս անհաւանական կարծիքը հանգ ։ Եահիսաթունեան Յովհաննէս եպիսկոպոսը մէջ բերելով՝ դրական բան չի ասում, այլ աւելացնում է որ, « Եթէ կաթուղիկէն է Սուրենայ անապատ կոչուել, այլ այն մենաստանը, որ Վահանը շինեց իւր վերանորոգած կաթուղիկէի մօտ <sup>(1)</sup>։ »

Ղազարը Ե. գարի վերջին գրելով <sup>(2)</sup>), որ Վահանը վերաշխեց կաթուղիկէն ու ո. կոյսերի վկայարանները, որ իրանից երկու հարիւր տարի առաջ շինել էին իւր նախնիք, հաստատում է այն ազգային պատմական վաւերականութիւն ստացած աւանդութիւնը, թէ յիրաւի, ո. Գրիգոր Լուսաւորիցը Դ. գարի սկզբում շինել է այդ տաճարները։

Ղազարը, իրեւ ժամանակակից պատմիչ և գլխաւոր գործիչ, չի ասում, որ կաթուղիկէն կամ նրա մօտ շինուած մենաստանը կոչուել են Սուրենայ անապատ։ Սուրենայ անապատ անունը յիշում է միայն Ասողիկը Փ. գարում, Ղազարից 5 գար յետոյ։

Մենք կարծում ենք, որ կաթուղիկէն Ղազարի օրով Սուրենայ անապատ չէ կոչուել, գուցէ այդպէս կոչում էր Ասողիի օրով, եթէ, «—որ Սուրենայ անապատ ասի», միջանկեալ նախագասութիւնը յետին գրիչների աւելացրութիւն չէ, որոնց օրով կաթուղիկէն իրեւ կրօնաւորների ապաստանարան, իւր անշքութեան ժամանակ Բ.—Փ. և յետին դարերում կարող էր ճանաչուել իւր Սուրէն անունով վանահայրերից մէկի անուամբ։

Այս մեր ենթադրութիւնը հաւանական է դառնում և նրանով՝ որ Ասողիկը գրում է «զմեծ կաթուղիկէ եկե-

1) Ստորագրութիւն էջմ. Ա., հատ. տպ. ի կաթղ. էջմ. 1842. 81—82:

2) Թուղթ Ղազարայ Փարապ. եր. 196. տող 31—32։

զեցին . . . նորոգեաց . . . , — որ Սուրենայ անապատ ասի».  
«Նորոգեաց» անցեալ ժամանակին է պատկանում, «ասի»  
բացատրական նախադասութեան բայը՝ ներկայինս թէ «որ  
Սուրենայ անապատ ասի» նախադասութիւնը աւելա-  
դրութիւն է, ցոյց է տալիս գրուածքի ոճը: Ասողիկը  
գրելով, «զդասս կրօնաւորաց բազմացուցանելով», պէտք է  
անմիջապէս հետեցնէր «վերակացու նոցա կարգեալ զՂա-  
զար...», բայց տեսնում ենք ընդ միջումն և միջանկեալ. —  
«որ Սուրենայ անապատ ասի». բացատրական նախադա-  
սութիւնը ներկայ ժամանակով:

Մենք թոյլ տուինք մեզ, մեր նպատակից այս շե-  
զումն, որպէս զի ցոյց տանք Սուրենայ անապատի և կա-  
թուղիկէի առնչութիւնը. իսկ կաթուղիկէն իրու մենաս-  
տան նշանաւոր է մեր նպատակի համար, որովհետեւ այդ  
մենաստանի վանահայր էր իւր դարի նշանաւոր պատմիչ  
Հազար Փարավեցին, և վանահայր Ղազարը տալիս է իւր  
դարի կրօնաւորների բարոյական նկարագիրը: Ղազարի  
օրով աւերակ Վաղարշապատում հնարաւոր էր մենաստան  
և կրօնաւորների ընակութիւն: Անցաւ մօտ 2 դար, Վաղար-  
շապատը, հաւանական է, սկսեց նորից շէնանալ, եթէ ոչ  
քաղաք՝ գոնէ մարդաշատ տան դառնալ: Վերաշինուեցին  
ա. Հովհաննէի և ա. Գայիանէի վկայարանները, կաթուղի-  
կէի փայտածածկ տանիրը փոխուեց. հոյակապ քարեայ  
կամարների վերայ բարձրացաւ վայելուչ քարեայ գմէթ:  
կաթուղիկէն այլևս անապատ չէր, այլ ժողովրդական  
տաճար: Ներսէս շինողը՝ որպէս նրբանկատ մարդ՝ անյար-  
մար դտաւ բազմաթիւ կրօնաւորների քաղաքի կենդրո-  
նում կաթուղիկէի մօտ ընակութիւնը, քաղաքից բաւական  
հեռու առապարում շինեց Զուարթնոց եկեղեցին, այն-  
տեղ ընակեցրեց երկրային զուարթուն կրօնաւորներին,  
որ աշխարհի հրապոյրներից հեռու՝ երկնային զուարթուն-  
ների նման կեանք վարեն:

Ներսէս նինողի այս հեռատես գործողութիւնը ժա-  
մանակակից Սեբէսուր ուրիշ կերպ է բացատրում. նա  
ասում է, որ ներսէսը Զուարթնոց եկեղեցին շինեց առա-

պարում, որովհետեւ ըստ աւանդութեան Տրդատը մինչև  
այդտեղ ընդ առաջեց ո. Լուսաւորչին, երբ նա, Արտա-  
շատի Խորվիրապից ազատուած, վերադառնում է Վաղար-  
շապատ։ Իսկ Սիմեօն կաթողիկոս երեանցին ժէ. դարում,  
կարծում է, որ Ներսէս Շինողը Զուարթնոց եկեղեցին  
շինել է նսեմացնելու համար կաթուղիկէի նշանակութիւ-  
նը, ուստի և ասում է. «Ճէր Ներսէս շինողն ի Տայը գա-  
ւառէ, ամս ի. Սա շինէ զսուրբն Գրիգոր խոչ եջմիածնի,  
որ այժմ հանգուցեալ է» (Զամբռ տպ. ի ո. էջմ. 1873.  
եր. 13)։ Իսկապէս Ներսէս Շինողը շինել է Զուարթնոց  
եկեղեցին Վաղարշապատում ապրող կրօնաւորներին այն-  
տեղ բնակեցնելու համար։ Եւ Ներսէսի պէս խստակրօն,  
նրբանկատ և գիտուն մարդը ուրիշ կերպ էլ չէր կարող  
վարուել։ Աշտիշատի ժողովը, գումարուած 365 թուին  
Մեծն Ներսէսի ու Արշակ թագաւորի ձեռներեցութեամբ,  
անհրաժեշտ կանոն է դնում և սահմանում, որ կրօնա-  
ւորների մենաստանները, եղբայրանոցները և յատկանձ-  
նակաց խրճիթները քաղաքներից և շիներից հեռու լինեն<sup>1)</sup>։  
Այս ժողովը յիշում է Փաւստոս Բուղանդն էլ։ Մեր կո-  
նոն գրքերը Փաւստոսից ու Խորենացուց առնելով՝ Աշ-  
տիշատի ժողովի որոշումները յօդուածների վերածելով՝  
գրում են. «վեցերորդ, կրօնաւորք այնր ժամանակի սկսեալ  
էին դատարկաշրջիկ լինել և ումանք ի նոցանէ նստէին ի  
տունս աշխարհականաց ի քաղաքի. և բազումք հանապա-  
զօրեայ ի գեօլս բնակէին իբրև ի վանու Այսմ կամելով  
դարման տանել՝ հրամայեաց (Ներսէս Մեծն) շինել զերիս  
դասս բնակութեան կրօնաւորաց յանապատ տեղիս, առա-  
ջին՝ զեղբայրանոցս կամ վանս միաբանակեաց կրօնաւո-  
րաց. երկրորդ՝ զմիայնանոցս, այսինքն զայնպիսի վանս,  
յորս թէպէտ և բազումք բնակէին, բայց առանձինն  
ճգնէին և երրորդ՝ զառանձնակեցաց խրճիթս բազումս,  
և յամենայնի ի սոսա կարգեաց կանոնա։—Ահա այս բա-  
ները ի նկատի ունելով՝ Ներսէս Շինողը Վաղարշապատի-

1) Մովսէս Խոր. գիրք Պ. գլ. ի.

առապարում, քաղաքից 4 վերստ հեռու շինեց Զուարթ-նոց եկեղեցին, որպէս եղբայրանոց կամ վանք միաբանակեաց կրօնաւորաց:

Լարուած աղեղը շուտ է խորտակւում: Ոչ մի հաստատութեան մէջ նպատակի խեղաթուրումն այնպէս արագ չէ կատարւում, ինչպէս կրօնաւորութեան մէջ: Դ. դարի սկզբում սկսուած կրօնաւորութիւնը, ի հարկէ մեծ ոգեսրութեամբ և խոտակեցութեամբ, 365 թուին այսինքն մօտ 50 տարուայ ընթացքում կրօնաւորները կսել էին դատարկաշրջիկ լինել, քաղաքներում և դիւզերում բնակուել, որքան տևեց Աշտիշատի ժողովի կանոնների բարերար աղգեցութիւնը, դարձեալ սակաւ, 50 տարի չեր անցել, որ նմուելի, Բրեիշոյի և Սուրմակի պէս փառամոլ, շահասէր և զեղծ մարդկանց օրով եկեղեցու պայծառութիւնը նսեմացաւ ու կրօնաւորական կարգերը խանգարուեցին: Զընայելով, որ կրօնաւորութիւնը իւր բարոյականի կողմից այսպիսի անհաստատ դրութեան մէջ է եղել, բայց չկայ մի հաստատութիւն, որ շեղուելով իւր բուն նպատակից, կարողանար դիմանալ այնպէս, ինչպէս դիմացել է կրօնաւորութիւնը, թէև այլանդակուած:

Դէպի կրօնաւորութիւն հրապոյրը միշտ եղել, է: Հին դարերում կրօնաւորութիւն ընդունելով՝ սարուկները ազատւում էին. կրօնաւորութիւն ընդունելով՝ ազատւում էին և դինուօրութիւնից: Անտուն, անտէր, անգործ, և օրական հացի կարօտ աղքատները կրօնաւորութեամբ ապահովում էին իրանց կեանքը և պատսպարան էին գտնում: Կային մարդիկ էլ, և դրանք մեծ թիւ էին կազմում, որոնք առանց երկրաւոր նկատումների, միայն հոգեկան անգործութիւն և հոգու փրկութիւն վաստակելու, երկնային արքայութեան համար թողնում էին աշխարհը իւր հրապոյրներով, բայց աւաղ, դրանցից մեծագոյն մասը կորցնելով երկրաւորը, երկնայինին էլ չէին հասնում:

Հազար Փարապեցին, իբրև Կաթուղիկէի վերաշինութեան հոգաբարձ և այնտեղի աբեղաների ու կրօնաւորների վերակացու, շատ տխուր գոյներով է նկարագրում:

նրանց. որից երեսում է որ հայ կրօնաւորութիւնն էլ բառաւորութիւն չէր կազմում ընդհանուր կրօնաւորութիւնից:

Ղաղարը ասում է. «Եւ շիցեն արդեօք արեղեանդ «Հայոց արժանի ողբոց, արտասուաց և բազում սպոյ— «Համբաւել զանպիտանս, խօսել առ նախանձու զանար «ժանս<sup>1</sup>) . . . ի հաւատոյ և յուսմանէ տգէտք երեխն, «ի գործս ծոյլք և անժոյժք, յորոց ըստ տգիտութեանն, «որ ի նոսա, և անկարգ ըստ վարուց՝ այդպիսի իսկ ար «դարե աղանդոց վայել էր բուսանել, ըստ յօդուածոց «առասպելաբանութեան, թէ ըստ «խոզի հարսնացելոյ «կոյաջուր բաղանիք»<sup>2</sup>):

« . . . իսկ արեղէնքս առ դառնաշունչ նախանձու, որ «միացեալ է ի սիրտս նոցա . . . ըստ ասացածի մարդարէին՝ «Յղանան զցաւս և ծնանին զանօրէնութիւն . . . «Եթէ յանկարծ շնորհի բան ի մարդասիրէն՝ հեղձնուն «ի նախանձուէ, եթէ տեսանեն զոք ի ժողովրդենէն, եթէ «դովէ, ծաղը առնելով ամաչեցուցանեն. Արդ լոել ինչ «ասեն, չգիտէ և ընդվայր աղաղակէ և քրքուի . . . «Նստին գլխարկեալք պատատեալ, որպէս համր, երեսօք «որպէս առ հոտեալ գիտկան, պապանձեալ գեւ»<sup>3</sup>):

« . . . երանելի փիլիսոփոսն Մովսէս, որ արդարե մինչ «դեռ էր ի մարմնի, ցանդ երկնային զօրացն էր քաղաքակից. ոչ ապաքէն ի տեղւոջէ ի տեղի արեղեանդ Հայոց «Հալածական արարին, Ո՞չ զլուսաւորիչն և զտգիտահալած «դրեանս նորա՝ առ անգիտութեան փաթաղ-իկէս կոչէին «և այլ բազում իրօք թշնամանեալ՝ յետոյ ապա յազագս «այլոց ամօթոյ՝ զիսարէական զեպիսկոպոսութիւնս<sup>4</sup>) նման «դեղոյ մահու արբուցեալ սրբոյն հեղձուցին: Որոյ ի ժամ-

1) Թուղթ Ղաղ. Փարպ. եր. 190. տող 12—14.

2) Նոյն. եր. 163. տող 14—24:

3) Թուղթ Ղաղարայ Փարպ. եր. 200. տող 14—24.

\*) Լուս աւանդութեան Մովսէս Խորենացին իւր խորին ծեռութեան ժամանակ Բագրեանդի եպիսկոպոս կարգուեց:—Հայոց կրօնաւորներից հալածուած Մովսէսը, ծպտեալ գնում է Օշական,

«վախճանին զինչպիսի ահաւոր նզովս դրով ի վերայ զլիսաւ և որաց քահանայութեանդ ասացեալ է, ձեզէն իսկ գիտէք տեղեկացեալք»<sup>1)</sup>),

Ղազարի «Երանելի փիլիսոփոս Մովսէսը», ինչպէս նա է նկարագրում, Մովսէս Խորենացին է, հեղինակը յայտնի ողբի, որը, որքան հետեւղութիւն համարուի ո. Գրիգոր Աստուածաբանի նման մի գրուածքին, այսու ամենայնին դառնացած սրտի արտայայտութիւն է, որ գրել է Յունաստանից վերադառնալուց յետոյ, Աստուածաբանի գըրս ուածքների ուսումնասիրութեան տպաւորութեան տակ, տեսնելով իր բարերար Մահակին և Մեսրոպին վախճանած, եկեղեցու բարեգարդութիւնը խանգարուած և երեկիրը աւերակ դարձած։ Այսպիսի գրութեան մէջ լրուած, անուշագիր մնացած Մովսէսը գրելով իւր յայտնի ողբը նրա մէջ անմոսն չէ թողնում և կրօնաւորներին՝ ընորոշելով նրանց։ «կրօնաւորք կեղծաւորք, անձնացոյցք, սնաւ-

ջրաղացպանութիւն է անում և միւնոյն ժամանակ դպրութիւն անելով իւր միծ վարդապետի գերեզմանի վերայ շինուած եկեղեցում, միսիթարութիւն գանում։ Ժամանակի կաթուղիկոս Յովհան Մանդակունին, որ նոյնոյն ո. Մեսրոպի կրտսեր աշակերտներից էր և Մովսէսի ընկերը, Օշական է դալիս և ո. պատարագ մատուցնում իւր վարդապետի գերեզմանի վկայարանում։ Ժպտեալ ջուղացպան Մովսէսը դպրապետ է կանգնում և յօրինելով երգում է «Ընարեալդ յԱսուծոյ, ով երջանիկ ուուրբ քահանայ» մեղեգին։ Հիանում է հայրապետք երգի իմաստով և դաշնակաւորութեամբ։ յանձին ջրաղացպանի ճանաչում է իւր ընկեր և աշակերտակից Մովսէս Խորենացուն, կարգում է նրան Բագրեանոգի եպիսկոպոս։

Ղազարը դրելով «յաղագս ալլոց ամօթոյ զիմարէական զիսպիսկոպոսւթիւնս նման զեղոյ մահու արբուցեալ որբոյն հեղձուցին», ակնարկում է այն հանգամանքը, որպէս թէ առ ամօթոյ ձեռնադրելով եպիսկոպոս, նրա բողոքի ձաշնը կարեցին, խեղդեցին։

Ղազարի այս գրուածքից երեսում է, որ Մովսէսը իրանից առաջ է վախճանուելի—Եթէ փիլիսոփոս Մովսէոր Մովսէս Խորենացին է, և ահաւոր նզովքը նրա յայտնի ողբը, ուրեմն նրա ժամանակի գաղտնիքը գեռ լուծուած չէ։

1) Թուալթ Ղազ. Փարտ. եր., 202 տող 1—10։

փառք, պատուասելք քան աստուածասէլք»<sup>1)</sup>:

Ղաղարի Նկալագրութեան մէջ կարեսր տեղ է ըլռանում նաև Խոսրովիկ թարգմանչի գալու մասին Հայոց արեղաների վրդովմունքը, արեղաների, որոնք, «որպէս ի վերայ թշնամւոյ ընդդէմ զինեցան, ասելով. «Ահա ուր դայ միւս ևս թարգմանն. և օրհնելոյն ի հեռաստանէ լուեալ զգանչիւն մահաձայն աղեղանցն, աղօթեաց առ բարձրեալն և վազգազակի ընկալաւ զինդիրն որում և տենչալի նշխարաց այլք և ոչ մեք, արժանի եղեն ընդունելութեան»<sup>2)</sup>:

Հայոց արեղաներին, պարեգօտաւորներին ու կրօնաւորներին ընորոշող հատուածնելը թէ Ղաղարի թղթից և թէ Մովսէս Խորենացուց քաղուածօրէն քերինք, որ ընթերցողները իսկական աղբիւրից տոնեն իրանց ծանօթութիւնը՝ թէ գրանք,—Ղաղարն և Խորենացին ինչ հանգամանքում՝ ինչ տրամադրութեամք են գրել. և հայ կրօնաւորութիւնը դատելիս՝ որոշ չափ պահենք և վերապահութեամք ընդունենք Ղաղարի և Խորենացու տուած փաստերը:

Բայ մեզ, ինքն.՝ Ղաղարը—Ենթարկուած լինելով արեղաների քամահրանքին, անպայման անաշառ ամբատանող չէ, իբրև շահագրգուռած մարդ. անշոշտ, նրա դրուածքի մէջ կիրք կայ:

Ղաղարի գրուածքից երեսում է, որ նա կրակոտ, անհանգիստ, դիւրագրգիռ, միշտ բողոքող, միայն իրան անմեղ ճանաչող մարդ էր. Այդպիսիները գործի մարդ չեն. իրանց եռանդը, տաղանդը, եթէ ունեն, սպառում են միայն ուրիշներին գատափետելով, ուրիշների ասածներին, արածներին չը հաւանելով, անցկացնելով և սեացնելով իրանց օրը ուրիշներին խծըծելով: Այժմ ևս պակաս չեն այդպիսիք և Ղաղարը այդպիսիներից մէկն էր. նա մեղադրում է իւր հովանաւոր Վահան Մամիկոնեանին էլ Յով-

1) Խորեն. գիրք. Դ. գլ. ԿԸ.

2) Թուղթ Ղաղ. Փարպ. եր. 202. տող 16—22.

հան կաթուղիկոս Մանդակունուն էլ Առաջինը՝ հայ իշխանների մէջ՝ ամենից քաջը, խելացին և քաղաքագէտն էր. Երկրորդը՝ հայրապետների մէջ՝ նոյն յատկութիւններով օժտուածը՝ եւ այդ ինքն Ղաղարն է ասում իւրապատմութեան մէջ։

Ղաղարը իւրան արգարացնելով կրօնաւորների բացասական յատկութիւնները նկարագրելիս՝ երկու երեք բառով ներկայացնում է հայ կրօնաւորների քաղաքացիական վիճակը. նա ասում է. «պարեգոտաւորք ազատեալք են Եթրիստոս»<sup>1)</sup>։ Այս գրում է նա Վահանին՝ կամենալով հասկացնել նրան, որ եթէ ինքն ժամանակին նրա ծառանու ստրուկն է եղել, այժմ, իբրև պարեգոտաւոր կամ կրօնաւոր՝ ազատ է. ուրեմն և Վահանը իրաւունք չունի նրա հետ, որպէս ստրկի հետ վարուելու։

Ղաղարը իւր պատմութեան մէջ ջոկ մարդ է, թղթի մէջ ջոկ, թղթի մէջ բացի իրանից բոլորը վատ են և խաւար, մինչեւ անգամ իւր հովանաւոր Վահան Մամիկոննեանը և Յովհան Մանդակունին, որոնք պատմութեան մէջ լաւ և լուսաւոր են, որոնցով նա ոգեսորւմ է, եթէ այս լուսաւոր և լաւ մարդիկն էլ հալածիչների կարգումն են, կը նշանակի Ղաղարն էլ շատ անմեղ գառն չէր, և եկեղեցին չէ յիշում նրան իւր սրբերի կարգում։

Ղաղարը անգոսնում է հայ հոգեսոր վարչութիւնը, որովհետեւ, մինչ պարսիկներն անգամ եպիսկոպոս էին ձեռնադրում, ինքն ոչ միայն եպիսկոպոս, այլ քորեպիսկոպոս էլ չէր<sup>2)</sup>։ Նա մոռանում է, որ կրօնաւորները իրաւունք չունէին եկեղեցական աստիճաններ ստանալ, նա մոռանում է, որ եպիսկոպոսը պարտաւոր է հեղ, խոնարհ լինել. մինչդեռ Ղաղարը ըմբոստ և ամբարհաւած օք է հանդիսանում նոյն իոկ իւր գրուածքով։ Եպիսկոպոսութեան ձգտող կրօնաւորը փառասէր և կենցաղասէր պէտք է լինի. և Ղաղարը այդպիսի ոք էր։ Ղաղարից դա-

1) Թուղթ Ղաղար Փարպ. եր. 188. տող 5—6։

2) Նոյն եր. 193։

տապարտուած կրօնաւորները այդպէս էլ համարում էին ու ասում. «գամ մի պիղծ ոք է և չարագործ Դազարայ վանք անդ են. և սիրէ զնոսա»<sup>1)</sup>:

Որբան և Դազարի և Խորենացու կրքոտ նկարագրութիւնը համարենք հետեւանք այն հալածանքին, որին նրանք ենթարկուած էին հայ կրօնաւորների կողմից, բայց այնու ամենայնիւ դրանց մէջ կայ որոշ, և արգէն ուրիշ ազրիւր ներով հաստատուած ճշմարտութիւն. ինչպէս բոլոր ազգերի, նոյնպէս և հայոց արեգաները, կրօնաւորները և պարեգոտաւորները նախանձու, անբարեցակամ, տգէտ, իմաստութիւն և զրքեր ծաղրող, դիտուններին հալածող, զրպարտիչ, անուանարկող և չարախնդաց մարդիկ են եղել. ինչպէս ընդհանուր, նոյնպէս և հայ խստակրօնները նեղութիւն անհամբեր, գծուծ, դիւրագրդիռ, ամբարհաւած, փարիսեցական բարեպաշտութեան արտաքին ձևերով պահածացող և ուրիշների թեթև զանցառութիւնը խոշորացնելով հաշակող ու գատափետող մարդիկ են եղել. Այս անում էին նրանք՝ իրանք փառաւորուելու և ուրիշին անուանաբեկելու համար. Դեռ նախնիք ասել են. միս ուտելլը մեղք են համարում, բայց եղբայրներին հանապազ դիշատելիս (բամբասանքներով ու զրպարտութիւններով) չեն խղճահարուեմ».

Մի Դազար, որի մասին կրօնաւորները ասում էին, «Մանուկ մի հոգաբարձ տեղւոյդ չկարէ առնել»<sup>2)</sup> թող այլ ամբաստանութիւնները, և մի Մավսէս Խորենացի, որի գրուածքները «փաթաղ—իկէս էին կոչում կրօնաւորները հեգնելով, կարող էին ամբողջ հայ կրօնաւորութիւնը սեացնել» Բարեբաղդաբար աւանդութիւնը տալիս է մեզե. դարի լաւագոյն կրօնաւորների նկարագիրն էլ յահճին ս. Սահակի և Մեսրոպի աշակերտ Թաթուլի ու Վարոսի<sup>3)</sup>, որոնք իրանց հետեւողներով Վարդանանց պատերազմից

1) Թուղթ Դազ. Փարալ. եր. 195:

2) Թուղթ Դազ. Փարփ. եր. 197:

3) Վարք Սրբոց հատ Ե. եր. 22—23:

յետոյ առանձնանում են Գաբրեգեան գաւառի սահմանում, կաղզուանից ոչ հեռու, Վիշապաձորի քարանձաւների մէջ։

Թէ լաւ վանահայրը ինչպէս պէտք է կառավարի իւրմիաբաններին, ինչ է նրա պարտքը։ Վանականները ինչպէս պէտք է վերաբերուեն գէպի կրանց վանահայրը և ինչպէս կենցաղավարուեն՝ տեսնում ենք ո. Թաթուլի խրատի մէջ, որ ըստ աւանդութեան՝ առել է նա, երբծերութեան պատճառով հրաժարւում էր վանահայրուաթիւնից և առաջարկում, որ կրօնաւորները Թումասին ընտրեն վանահայր։

Թաթուլը ժողովելով եղբայրներին—կրօնաւորներին—պատուիրում է, որ Թումասին ճանաչեն հասարակաց հայր և ամեն բանում հնազանդ լինեն—թէ Տիրոջը ծառայելիս և թէ միմեանց սիրելիս Թումասին էլ առաջ կոչելով աւանդում է նրան կրօնաւորական կարգի կանոնները և պատուիրում, որ նա էլ իրեւ միաբանութեան առաջնորդ՝ երկայնամիտ, ողորմած լինի, որ կարողանայ շահել եղբայրներին։ Ինչպէս անունով հայր ու առաջնորդ է, գործով էլ առաջնորդ հանդիսանայ։

Աւելորդ չենք համարում քաղուածօրէն աշխարհաբառ մէջ բերել Թաթուլի խրատը<sup>1)</sup> առ Թումաս, որը, որքան և պատմական հաւասարիք չունենայ, այնուամենայնիւ իւր մէջ ամփոփում է լաւ կրօնաւորութեան և լաւագոյն վանահայրութեան իսկական պատկերը։ Այդ խրատը ամփոփումն է այն մտքերի, որ արտայայտել են նշանաւոր հայրերը և որոնք գանուում են Հարանց վարքի մէջ նեղոսի և ուրիշների անունով։

Թաթուլը վանահօր պարտքը այսպէս է որոշում։

«Հասարակաց հայր ես, հայրաբար վարուիր, Ամենքարեծեռութեան օրինակ հանդիսացիր եղբայրներին, Ուսուցանելով խրատիր, սիրով մխիթարիր, յուսով գարմանիր։

1) Վարք Արքոց հատ. է, եր. 26—32։

«Որդեակ, ինչ որ եղբայրներիցդ պահանջում ես, առաջ գու կատարիր։ Քիչ խօսիր, արդիւնք շատ ցոյց տուր։ Թող գործդ լինի քարոզող։

«Առաջնորդը ծնող է ու բժիշկ։ Հիւանդը կարօտ է սիրոյ և առողջութեան։ Որդեակ, նրան, որ պատահաբար է սխալում և ոչ սովորաբար, մի պատժիր, այլ հոգեսորցաւկցութեամբ բժշկիր։ Մանկագոյններին հնազանդութեան և աշխատասիրութեան վարժեցրու, ծերերին սորվեցրու սաղմոսերգութեան, ձեռքի վաստակի և մանուկների համար բարի օրինակ լինելու։

«Հոգեոր առաջնորդը աստուածային հուր է - լուսաւորող, մաքրող և ջերմացնող։ Նա պէտք է ապականարար ախտը այրի, գիճութիւնը ցամաքեցնի և կրօնաւորական կարգով քննի. և ոսկու պէս զտելով՝ անազարտ սրբութեամբ եղբայրներին Աստուծոյ ընծայի, որ ինքն էլ տասն քաղաքների վերայ թագաւորի։

«Կրօնաւորները միս և գինի չը պէտք է գործածեն։ Նրանք միայն պէտք է գործ ածեն, որոնց անհրաժեշտ է։ Պէտք է ժուժկալ լինեն՝ որքան հարկաւոր է, յուսով աղօթեն, հաւատով աշխատեն և գոհ սրտով ճաշակեն։

«Որդեակ, բերանիցդ նզովք գուրս չգայ։ Խրատը բարկութեամբ չը խօսես՝ որ սխալուած եղբայրը խրատի սաստկութիւնից չընկղմուի։ Աղօթելու տեղը հասնելիս՝ երեք կամ աւելի անդամ ծունր գիր, գետնամած Աստուծոյ օգնութիւնը խնդրիր, և ապա սկսիր պատշաճի սաղմոսը։ Մի պղտորիր սրտիդ խորհուրդը։ Շատախօս մի լինի. ձեռքդ մի շարժիր։ Դէպի արեւմուտք մի դառնար, աչքդ պարաբելու համար շուրջդ մի նայիր։

«Որդեակ, եղբայրներիդ հետ իշխանութեամբ մի վարուիր. և ինչ որ դու չես կարող ասել՝ մի պահանջիր եղբայրներիցդ։ Տեղ մէկ մէկ չուղարկես, այլ երկու երկու, եթէ մէկը գլորի, ով կըլինի կանգնեցնող։ Եթէ եղբայրներից մէկը ախտանայ հոգով, թէե շատ բժշկութեան պէտք լինի, միայն սրբութիւնը արգելիր (միայն հաղորդուիլ արգելիր), միւս կարգերը եղբայրների հետ թող

պաշտի, Երկիւղածը սիրուց աւելի կը պատկառի քան պատուհասից։ Զգեստը լինի, ինչպէս որ պատահի, և այնչափ, որ վտանգի առաջը առնի։ Պատարագի և միւս ժամերգութեանց ժամանակ մարմնաւոր կամ ձեռքի աշխատանքը դադարեցրաւ։

«Որդեակ, երբ եղբայրներիդ մէկը ստահակում է, մի թողնիր որ կորչի, նրա չար վարքին և ատելի գործերին համբերիր, ինչպէս որ համբերում է քո պարզ հոգին՝ մարմնիդ, ախտակից լինում։ Բաւական չէ միայն համբերելը, օգնիր, որ զգաստանայ։ Առանձին յանդիմանիր, ծերերի առաջին՝ աղաչիր, եղբայրների մէջ՝ խրատիր։ գուցէ գառնայ իւր ստահակութիւնից։ Երկիւղածին մեծարիր։ ստահակին՝ խրատիր, պահանջիր՝ որ առաւոտերեկոյ խստովանեն։

«Որդելիր ծաղրը, կատակը և ցոբաբանութիւնը։ Մանուկներ մի ժողովիր, թէ չէ, շուտով կը յաղթուես։

Ա. Թաթուլի, Վարոսի և Թումասի յիշատակը տօնում է Եկեղեցին հոկտեմբեր ամսում ։ Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի նշխարաց գիւտի տօնին՝ եօթն խոստանարակաց հետ։

(Կը շարունակուի)

Յուսիկ Խաղա.

